ԵԴ2/10599/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03 հուլիսի 2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «ԽԱՉ-ԱՐՄ» ՍՊ ընկերության և «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍՊ ընկերության հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑԻ

26.06.2023 թվականին «ԽԱՉ-ԱՐՄ» ՍՊ ընկերության և «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արև Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել /փոստային ծառայությանն է հանձնել՝ 21.06.2023թ.-ին/ դատարան ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության տնօրենի 24.05.2023թ.-ի թիվ 9 ծանուցմամբ կայացված թիվ ԱՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-06/22-5 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը դատավորին է հանձնվել 28.06.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԽԱՉ-ԱՐՄ» ՍՊ ընկերության և «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» ՍՊ ընկերության անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության տնօրենի 24.05.2023թ.-ի թիվ 9 ծանուցմամբ կայացված թիվ ԱՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-06/22-5 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականին օգոստոսի 11-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ
ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ